With financial support from the Russian Federation

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԳԱՍՏՐՈ ԲԱԿ» ՆԱԽԱԳԾԻ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ

Տեղեկացնում ենք, որ ՄԱԶԾ «Ինտեգրված գյուղական զբոսաշրջության զարգացում» ծրագիրը (ՄԱԶԾ ԻԳԶԶ) հայտարարում է գյուղական համայնքներում «Գաստրո բակ» նախագծի իրականացման մրցույթ՝ համաֆինանսավորման սկզբունքով, որը տրամադրվելու է գինեգործական սարքավորումների, նախագծային և նախահաշվային աշխատանքների, շինանյութի և գույքի, մասնագիտական խորհրդատվության ձեռք բերման նպատակով:

«Գաստրո բակ» նախագծի նպատակն է նպաստել գյուղական համայնքներում զբոսաշրջության ծառայությունների դիվերսիֆիկացմանը, զարգացմանը և խթանմանը: Այն ստեղծում է բազային զբոսաշրջային ծառայություններ՝ հիմնվելով գյուղական սեփական տնային տնտեսությունների վրա: «Գաստրո բակ» նախագիծը ներառում է հետևյալ համալիր ծառայությունները՝ ավանդական սննդի տրամադրում, տնական գինեգործություն և արհեստագործություն:

«Ինտեգրված գյուղական զբոսաշրջության զարգացում» ծրագիրը ֆինանսավորվում է Ռուսաստանի Դաշնության կողմից և իրականացվում ՄԱԿ-ի զարգացման ծրագրի կողմից՝ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության հետ համատեղ:

Մրցույթին կարող են մասնակցել՝

ՀՀ քաղաքացիություն և գյուղական համայնքներում մշտական բնակություն ունեցող անձինք, որոնք համապատասխանում են հայտադիմումով սահմանված պահանջներին, ինչպես նաև պատրաստակամ են Նախագծի իրականացման համար կատարել 40% ներդրում:

Մրցույթին մասնակցելու համար՝

Հարկավոր է լրացնել առցանց հայտադիմումը՝ https://form.jotform.me/90964428449470
և ներկայացնել հայտադիմում նշված պարտադիր փաստաթղթերի ցանկը:

Հայտադիմումների ներկայացման ***վերջնաժամկետն է ս.թ. մայիսի 6-ը՝ ժամը 18:00:***

Հայտատուների ընտրությունը կկատարվի սահմանված չափանիշներին համաձայն՝ մրցութային հանձնաժողովի կողմից: Ծրագիրը կապ կհաստատի միայն առաջին փուլով ընտրված մասնակիցների հետ:

Հարցերի դեպքում կարող եք զանգահարել +374 60 530 000/ ներքին՝ 190 կամ +374 96 439323 հեռախոսահամարներով, երկուշաբթիից-ուրբաթ ժամը 10:00-18:00: